


ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան վեր 10 րուբլ, կէս տարւանը 6 րուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ինչով բացատրել. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Հայոց թատրոն. Նամակ Երևան. Ներքին լուրեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից.
Նամակ Պարսկաստանից. Նամակ Պարսկաստա-
նից. Արտաքին լուրեր. —ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ. —ՏԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԻՆՉՈՎ ԲԱՏԱՐԵՆԷ

Մեզանում ոչինչ է աջողութիւն. —ահա
ընդհանուր գանգաւոր, որ լսվում է միշտ
մեր հասարակութեան մէջ ամեն կողմից և
ամեն հանգամանքում:

Բայց ինչով բացատրել այդ երեւոյթը:
Մեր կարծիքով մեր մէջ հասարակական
խելացի փոխադարձ հաղորդակցութեան
կատարեալ բացակայութեամբ:

Եթէ համեմատենք արեւմտեան եւրոպայի
Ռուսաստանի հետ, կը տեսնենք որ առա-
ջինում հասարակական կեանքը այն աստի-
ճան զարգացած է, հասարակութեան եր-
կու սեռի անդամներն այնքան միջոց ու-
նեն միմեանց հանդիպել, միմեանց մտքերը
փոխանակել ընտանիքից դուրս, այլ և այլ
հասարակաց օգտուէտ հաստատութիւննե-
րի մէջ. —որ ընտանիքը այլ ևս հարկաւոր
ութիւն չունի մեր ժողովրդի հասարակու-
թեան փոխադարձ հաղորդակցութեան կեն-
տրոն լինել, այլ ընտանիքը մնում է իրան
ընտանիքի անդամների համար մի ներքին,
սահմանափակ, ընտանի շրջան: Ռուսաս-
տանում, ընդհակառակը, հասարակաց
կեանքը այնքան զարգացած չէ լինելով,
մարդիկ դարձրել են իրանց ընտանիքը մի
լայն հասարակաց շրջան, որտեղ տեսնվում
են, մտաւոր և բարոյական փոխադարձ
հաղորդակցութիւն ունեն, միմեանց մտքերն
են փոխանակում, այլ և այլ հասարակաց
հարցերն են վճռում:

Մեզանում հայերի մէջ, չէր կայ ոչ մէկը
և ոչ միւսը. մեր ընտանիքը անմատչելի է,
մտաւոր ու հասարակական կենտրոն չէ,
ինչպէս Ռուսաստանում, իսկ միւս կող-
մից մեր ընտանիքից դուրսն էլ չէր կայ
բացակայութեան և հարուստ հասարակական
կեանք, ինչպէս արտասահմանում:

Ռուսաստանում, հասարակաց կեանքը
շատ զարգացած չէ լինելով, ընտանիքը,
ընտանեկան շրջանը դրա փոխարէն ստա-
ցիլ է ընդարձակ, կենդանի հասարակաց
ժողովատեղիի նշանակութիւն և աջողու-
թեամբ կատարելով այդ պաշտօնը, փոխա-
րինել է իրանով դրսի հասարակական
կեանքը: Այդ երեւոյթը նկատում են բոլոր
օտարները, որոնք նոր են գալիս Ռուսաս-
տան:

Եւրոպայում, ընդհակառակը, հասարա-
կաց կեանքը անչափ և բազմակողմանի
կերպով զարգացած լինելով, այնտեղ հարկ
չէր կայ ընտանի շրջանից հասարակաց ժո-
ղովատեղիի, հասարակական շրջան դարձ-
նել: Այնտեղ ընտանիքը վարում է մի ներ-
քին, նեղ ընտանեկան, մասնաւոր կեանք,
բայց նայն ընտանիքի բոլոր անդամները
մասնակցում են հասարակական կեանքի
բոլոր ձիւղերին ընտանիքից դուրս:

Ռուս ընտանիքը, —մենք խօսում ենք
գլխաւորապէս Ռուսաստանի մայրաքաղաք-
ների և մեծ քաղաքների կեանքի վրա,—
շրջան է ամեն բանի համար: Այդտեղ
լինում են և գրական երեկոներ և երաժշ-
տական երեկոներ և ամեն տեսակ ուսում-
նական ժողովներ:

Նոյնը չէ արտասահմանում: Այնտեղ ըն-
տանիքը մեծ մասամբ գրեթէ անմատչելի
է դրսի, հասարակական կեանքի համար.
Նրա կեանքը ներքին է, մասնաւոր է: Բայց
նրա անդամներից իւրաքանչիւրը անդամ
է մի որ և է ընկերութեան և այդտեղ,
ընտանիքից դուրս, նա տեսնվում է իր նը-
մանների հետ, մասնակցում է հասարակաց
կեանքին: Ընտանիքի հայրը անդամ է այս

կամ այն մասնագիտական, կամ արհեստա-
գիտական ընկերութեան, մայրը անդամ է
իգական որ և է ընկերութեան, որպէս թէ
գրական, թէ մարմնամարզական, թէ երգե-
ցողական ընկերութիւնների անդամ է, աղ-
ջիկը երաժշտական, գրական, մանկավար-
ժական ընկերութիւնների անդամ է, և
այլն:

Մեզանում, կրկնում ենք, ոչ մէկը և ոչ
միւսը չէր կայ:

Մեր կեանքի պատկերը այս է. տղամար-
դիկ ամբողջ օրը իրանց պաշտօնի, կամ
գործի մէջ են, կանայք և աղջիկներ կամ
անգործ տանն են նստած, կամ փողոցները
չափում են մոզային ապրանքներ նայելու
և առնելու համար: Երեկոյեան մարդը դը-
նում է կրօն թուղթ խաղալու, կինը և
աղջիկը տանն են մնում: Կամ եթէ բոլորը
միասին գնում են հիւր մի ուրիշ ընտանի-
քի մօտ, —անմիջապէս տղամարդիկ բա-
ժանվում են կանանցից, փակվում են մի
առանձին սենեակում, սկսում են թուղթ
խաղալ և ծխել, իսկ կանայք սկսում են ի-
րանց մէջ խօսել մոզաների մասին, կամ
բամբասել բացականչել:

Եւ այդպիսի հասարակութեան մէջ, որ-
տեղ ոչ հասարակաց կեանք կայ, ոչ էլ ըն-
տանիքի մէջ մտքացած է հասարակական
տարրը դուրս պահանջում էր որ առհասարակ
որ և է կեանք լինի, որ և է մտաւոր
և բարոյական առաջադիմութիւն լինի, պա-
հանջում էր որ բարեգործական ընկերու-
թիւն, թատրոն, դպրոց, գրականութիւն,
լրագրութիւն առաջ գնան ու ծաղկեն:
Այդ է պատճառը որ մեզանում ամեն
բան սկսվում է և անմիջապէս ընկնում
մեռնում է:

Այն հասարակութեան մէջ, որտեղ չէր
կայ ոչ հասարակական, ոչ էլ ընտանեկան
մտաւոր և բարոյական կեանք, այդ տեսակ
հասարակութեան մէջ չեն կարող ծնվել ոչ
հասարակաց նոր և տեղական հաստա-
տութիւններ, չէ կարող գոյութիւն ունե-
նալ ոչ թատրոն, ոչ գրականութիւն, ոչ
դպրոց, ոչ էլ մանուկ: Մտքերի փոխադարձ
փոխանակութիւն, հասարակաց մտաւոր
փոխադարձ խելացի հաղորդակցութեան
բացակայութեան պատճառով չեն կարող
ծնվել ոչ նոր և ինքնուրոյն վէպեր, բո-
մաններ, բեմական ստեղծագործութիւններ,
ոչ էլ կարող են յայտնվել նոր տաղանդ-
ներ թէ գրական բանաստեղծական, վի-
պական, պոլիգրիփստիական, բեմական աս-
պարիզում, թէ վերջապէս գեղարուեստա-
կան նկարչական, երաժշտական ասպարի-
զում:

Մարդս հասարակաց էակ է, և հասա-
րակաց խելացի ու բարոյական փոխադարձ
յարաբերութիւններից գուրկ մտալով, նա
անընդունակ է ստեղծագործել և այդ տե-
սակ հասարակութիւնների մէջ ոչինչ չէ
կարող յայտնվել ու առաջ գնալ, այլ ամեն
բան մեռցվում է անմիջապէս ծնունդ առ-
նելուց յետոյ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, հոկտեմբերի 6-ին, հայոց խումբը
ներկայացնում էր Ա. Դիւմայի «Քին» (Հանձար
և անառակութիւն): Քին ներկայ դարու առաջին
քաղաքում խաղացող երեկոյ ղերասան էր, մինչև
անգամ, ինչպէս ժամանակակից մի յայտնի կրի-
տիկոս ասում է, նրա նմանը դեռ չէ եղել: Ա.
Դիւմա այդ անձնաւորութիւնը շինել է իր գրա-
մայի հերոս: Ի հարկէ, Դիւմայի Քին շատ և շատ
զանազանվում է իրականից: Դիւմա ներկայա-
ցնում է նրան մեղ իբրև մի հանձար, որի մէջ
անբաժան խառն են ամենաազնիւ ձգտումներ և
վերին աստիճանի անառակ գործողութիւններ:
Մեր բեմի վրա բոլոր այն տեսարանները, որոնց

մէջ դուրս են բերված Քինի անառակութիւնները,
դուրս են ձգված): Նա մի և նոյն ժամանակ
չաբախեցողով պարապված է հարեցողութեամբ
յետ ընկած պանդոկներում, բռնաբերով կռոււմ է
(բոկս) նաւաստիների հետ, և դրա հետ միասին
նա պաշտպան է հանդիսանում անօգնական միսս
Աննա Գեմբլին (տ. Ջաքէ), ներկայացումն է տա-
լիս յօգուտ իր հին ընկերակիցներից մէկի, որ
ծանրաբեռնված է մեծ ընտանիքով, բայց ուսը
կտրելով չէ կարող նրան կերակրել. Քինը այդ
անում է այն ժամանակ, երբ պարտատէրերը ա-
մեն տեղ փնտռում են նրան, գրասեղ են նրա
տունը և նա ինքն ստիպված է ամբողջ օրը անց-
կացնել կառքում պարտատէրերի ձեռքը չընկնելու
համար: Ինչպէս տեսնում ենք, Քին շատ բարդ
քնաւորութիւն ունի: Եւ այդ քնաւորութիւնը ձեռ-
կերպող պ. Ալաւմեան ցոյց տուեց, որ նա
առաջնակարգ դերասան է: Տեսել ենք մենք
պ. Ալաւմեանին շատ դերերում, բայց մի այնպի-
սի գեղարուեստական տպաւորութիւն, ինչպէս
նա արեց այդ երեկոյ, երբեք նա չէ գործել: Հա-
մեմատութիւններ անել ուրիշ, առաջնակարգ գե-
րասանների հետ—այդ դերում—բոլորը յօգուտ
պ. Ալաւմեանին են: Նա իր անձնական «սեփ»
ստեղծից իր ներկայացումը անձնաւորութիւնը:
Նա բոլորովին միացաւ այդ անձնաւորութեան
հետ, առանձնացնելով, բաժանելով իր «սեփ»
այն տիպական դերեր, որոնց Գիւմա տունը է
իր հերոսին: Մի առ մի խօսել բոլոր տեսարան-
ների վրա առ այժմս աւելորդ ենք համարում,
միայն, պէտք է ասած, բոլոր տեսարաններից ա-
ւելի աչքի էին ընկնում երկուսը՝ լորդ Մեյվիլը
(պ. Վրայը) հետ բացատրութիւնը, որտեղ սաստիկ
բարկութիւնը փոխվում է կծու հեգնութեան, և
թատրոնի սենեակում երբ խմանում է, որ նրա
սիրած կնոջ Հեդիթի (օր. Վարդուհի) ամուսին
Կեֆելը (պ. Մերադեան) գտել է իր, Քինի սե-
նեակում կնոջ հովհարը:

Մեր բեմի վրա «Քին», ինչպէս վերև էլ ակ-
նարկեցինք, խաղացվում է փոփոխված կերպով:
Այդ փոփոխութիւնները պիէսայի վերջում փո-
խում են պիէսայի միտքը. Քին սաստիկ զայ-
րացած լինելով, բեմից, ներկայացման ժամա-
նակ անպատու է դուրս Սոմմերսեթին (պ. Ա.
Դայեան) և լորդ Մեյվիլին. թատրոնական վար-
չութիւնը Քինին պատասխանատուութիւնից ազա-
տելու համար յայտնում է, որ նա ցնորված է:
Բարձրագոյն հրամանով Քինին հրամայվում է հե-
ռանալ Անգլիայից, նա ստիպված է լինում այդ
կատարել, տանելով իր հետ Աննա Գեմբլին:

Մեզանում գէն է ձգված վերջին գործողութիւ-
նը, որտեղ Քին Աննայի հետ ուղևորվում է
Ամերիկա, բայց դրանից չորրորդ գործողութեան
երկրորդ պատկերում ձեռք նվում է, որ Քին իսկա-
կան կերպով խելագարվում է: Ի հարկէ, նա այդ
անում է Զեֆիլիտ գործելու համար. բայց դուրս
է գալիս մի փոքր անբնական բան. Քին այնպի-
սի մարդ չէ, ի հարկէ, որքան պիէսայից երևում է,
—որ սիրոյ նախանձից խելագարվի:

Միւս մասնակցորդներից աչքի էր ընկնում պ.
Տեր-Գաւթեան Պրիս-Տօլի միջանկեալ դերում:
Պ. Տեր-Գաւթեան մեր այժմեան խմբում բռնում
է երկրորդ տեղը իր տաղանդով պ. Ալաւմեանից
յետ: Ունենալով գեղեցիկ կոմիկական ձիւղեր,
պ. Տեր-Գաւթեան դժբաղդաբար շատ անգամ
չափազանցում է, բայց պէտք է ասած, որ այդ
պակասութիւնը այս անգամ չէր և նրա պարզ
խաղը բոլոր հանդիսականների մէջ բարձրացնում
էր գուրաւր կենդանի ծիծաղ: Պ. Ալաւմեան աւե-
լի թղթ էր, քան բարեկենդանի ժամանակ պ.
Ալաւմեանի գաստրօլներին: Վատ չէին տ. Ջաքէ
և մասամբ օր. Վարդուհի (միայն մի տեսարա-
նում—Քինի սենեակում):

Դեր չիմանալով փչացնում է ամեն բան: Շատ
էլ հաճելի չէ մեզ ամեն անգամ մի և նոյն բանը
կրկնել, բայց ինչ արած, որ առանց դեր խմանա-
լու անկարելի է լաւ խաղալ. դերը չիմանալով
դերասանը բոլոր իր ուշադրութիւնը լարած է
ուշադրարի խօսքերին, էլ որտեղից կարող է նա

ուշադրութիւն դարձնել իր խաղի վրա: Օրի-
նակ, հետեւալ մանր և չնչին բաները, բայց որոնցից
կարվում է ամբողջ տպաւորութիւն. առաջին գոր-
ծողութեան մէջ դուրս Սոմմերսեթ մտնում է սենե-
կակը, բարեւում է ամենքին, բայց տանտիկնոջ, կամ
հիւր տ. Չմէկեանը խնդրում է տանտիկնոջ նստել:
Մի և նոյն գործողութեան մէջ մինչդեռ Հեդիթն
կարդում է Աննայի Քինին ուղղած նամակը, միւս
բոլոր հիւրերը կանգնած են անշարժ, անխօս,
կարծես մեռած լինեն:

«Քինից» յետոյ ներկայացվեցաւ պ. Չմէկեանի
փոխադրած «Նկարիչներ» վոքովիլը: «Նկարիչնե-
րը», իբրև վոքովիլ, շատ գեղեցիկ բան է, որի
միակ պակասութիւնն այն է, որ շատ երկար է:
Չարմանալի բան դուրս եկաւ. գլխաւոր դեր կա-
տարողներից ամեն մէկը—պ. Տեր-Գաւթեան (Ար-
չակ)՝ Մերադեանց (Արդուխանեանց) և Ալաւմեան
(Գրիգոր, դարաբաղդի ծառան)—առանձին առած
շատ լաւ էին խաղում, բայց ընդհանուրում վո-
քովիլը յաջողութիւն չունեցաւ: Այդ երեւոյթը
կարելի է վերաբերել այն բանին, որ հասարա-
կութիւնը և իրանք դերասանները դեռ «Քինի»
աղեցութեան տակն էին:

Թատրոնը գրեթէ դատարկ էր:

Այսօր, հինգշաբթի, հայերէն ներկայացում չ
լինի, որովհետեւ տօնվում է Թիֆլիսի օպերայի
երեսուն և հինգամեակը: Ներկայացում կը լինի
երկուշաբթի, կը տրվի Դեաչենկօի «Жерта за
жесты» դրաման:

Nemo

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Հոկտեմբերի 1-ին

Մենք եւրոպական այն սովորութիւնները, ապ-
րելու եղանակները և հագնելու ձևերը, որ փոքր
ի շատէ նպաստում են մեր շահերին, հեշտու-
թեամբ ընդունում ենք և խառնելով սրանց հետ
տեղային պահանջները, մեր երկրի սովորութիւն-
ները և մեր ոգին, ստանում ենք մի «անհամ» և
իրար հակասող բան:

Մեր կեանքը լի է այսպիսի կէս-եւրոպական
և կէս-տեղային երկոյթներով: Շուշուց չը հեռա-
նանք:

Եթէ մի հասկացող մարդ, մի օտարական անց-
նէ տեղիս լայն փողոցներով, պիտի նկատէ, որ
Շուշին իր շինութիւններով խիստ նմանում է եւ-
րոպական քաղաքներին: Զբոսաւրելով նա անե-
րի արտաքին գեղեցկութեանը, պիտի հետաքրք-
վի տեսնել նրանց ներքին չեղողութիւնը: Մտնե-
լով ներս նա պիտի մի քանի րօպէ զարմացած
մնայ: Տան տիրոջ նուրբ ճաշակի սաստիկ զար-
գացողութիւնը օտարականը պիտի տեսնէ եւ-
րոպական կարասիների, դարձերի, գեղեցիկ պատ-
կերների և ուրիշ շատ բաների մէջ: Անցնելով
մի ուրիշ սենեակ, նա այստեղ մի բոլորովին հա-
կասող և ծանր տպաւորութիւն գործող տեսարա-
նի ականատես պիտի լինի: Տանտիկինը մաքուր
և նուրբ եւրոպական հագուստը հագին, երեսի
գոյնը թուած, ձեռ ու ոտը դողալով մի ահագին
փայտ աջ ձեռքին՝ կանգնած է իր երեխաներից
մէկի առաջին: Երեխայի աչքերի արտասուքը և
քիթից բղխած արիւնը շաղախել են խեղճ ման-
կան հագուստը. նա կանգնած է իր մօր մօտ,
ինչպէս դատաւարտեալը իր դահճի առաջ: Տան
մի ուրիշ կողմում երեխաներից երկուսը իրար
մազերն են քանդում և իրանց հասակին և հաւ-
կացողութեանը չը համապատասխանող խօսքերով
իրար հայնջում: Օտարականը եթէ վստահի հար-
ցնել տանտիկինից այդ աղմուկի պատճառը, նա
պիտի գտնէ, որ երեխայը կամ տանը, մօրը բա-
ցակայութեան ժամանակ, վաղվղել են, կամ կա-
մենում են դուրս գալ, և ազատ երկնքի տակ
քիչ ազատ խաղալ,—իսկ մօրը այս հանձնի չէ
երեւացել:

Գուրս գալով այստեղից, օտարականը մտնում
է հայ վաճառականներից մէկի մագազինը. նա
գտնում է, որ այստեղ նստած են հինգի չափ
պարոններ: Նրանք հագնված են եւրոպացու նը-

ման, նրանց կապույտ ակնոցները, սև ձեռնոցները ու զլխարկները, ձեռնափայտերը և լեզուն, որով խօսում են վերջիններս, կատարեալ եւրօպական են: Սրանք խօսում են զանազան բաների վրա: Մէկը պատմում է, թէ ինչպէս ինքը «եւրոպականացած» մի հրէայի խաբեց և կամ ինչպէս ինքը իր «խելօքութեամբ» անսպասելի օգուտ ունեցաւ: Երկրորդը պատմում է, թէ ինչպէս ինքը վարպետութեամբ այս ինչ վաճառականին փնտրեց: Երրորդը զանգատում է եւրօպացի վաճառականներին կրած փնտրանքի վրայ: Եւ յայտնում, որ հայ վաճառականները պիտի հեռանան այնտեղից, ուր եւրօպացիք միացած ուշիկներով մուտք են գործում: Զորրորդը ծիծաղելով յայտնում է այն կարծիքը, որ եթէ մուշտարին աչքեր ունենայ, իրանք սոված պիտի մեռնեն:

Անցնում է հետաքրքրիւ օտարականը լայն բազարով: Այստեղ գտնում է նա մի շարք հայ մանրավաճառներ, արհեստագործներ, պատանիներ, և մի քանի էլ դատարկաչլիկ երիտասարդներ: Սրանք բոլորն էլ աշխատել են, իրանց կարեցածին չափ, իրանց խանութներին, հագուստներին և լեզուին եւրօպական գոյն տալ: Մի փոքր այստեղ կանգ առնելով մեր օտարականը պիտի գտնէ, որ վերջիններս, մեկնելով իրար քթախոտի ամանը, կամ խաղացնելով ձեռքին մի գրվանդանոց, խօսում են «Եփրեմ-վերդու» սարսափելի հրաշքներից, ծիծաղելով նախապաշարմունքներից և ուրիշ այդպիսի բաներից:

Ի. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ասում են որ ԹԻՖԼԻՍԻ հայ-կաթողիկոս լատինական պատէր զօն-Վիտորի (Թուանեանց) հրաժարվում է իր պաշտօնից, իր ծուխի հետ դժգոհութիւններ ունենալու պատճառով:

Ինչպէս յայտնի է հոկտեմբերի 1-ին կատարվեցաւ ՄԶԽԹԻ ուխտադնարկութեան տօնը, բայց չը նայելով եղանակի աճող լինելուն, այս տարի համեմատելով անցեալ տարիների հետ, ուխտաւորները թուով շատ սակաւ են եղել:

Չը նայելով երկրի բոլոր կողմերի բնական բերքերի առատութեան, մեր քաղաքում, ԹԻՖԼԻՍՈՒՄ վերջին օրերս կենսական մթերքները զգալի կերպով թանկացան: Այսպէս թխած հացը, երկրորդ տեսակի, որ առաջ վաճառվում էր ֆունտը 2 1/2 կօպէկով, այժմ 3 կօպէկով է ծախվում, բրինձը ծախվում է 8 կօպէկով, միսը, որ նորերում 6 կօպէկով էր ծախվում ֆունտը, այժմ 7—8 կօպէկ արծէ, դմախից հալած իւղը ծախվում է այժմ 35 կօպէկով, պանիրը 12 կօպէկից ֆունտը բարձրացել է մինչև 20 կօպէկ, և այլն:

ԳՕՐՈՒ բաժինը հայոց Բարեգործական Ընկերութեան խնդրում է մեզ տպել հետևեալը: «Պ. Յակոբ ձմարտեանց և տիկին Մամիկոնեանց կամեալով նպաստել հայոց Բարեգործական Ընկերութեան տեղիս բաժնի առաջադիմութեանը, այս առաւ Ձալալօղլում, տեղական սիրողների մասնակցութեամբ տուել են յօգուտ վերոյիշեալ ընկերութեան մի ներկայացումն, որից գոյացած 42 ռուբլի դուտ արդիւնքը ընկերութեան վարչութիւնը մեծ շնորհակալութեամբ ստացաւ»:

ԳՕՐՈՒ հայոց երկսեռ դպրոցների հոգաբարձու-թիւնը յայտնում է այդ քաղաքի հայոց դպրոցներում ուսուցչական պաշտօն վարելու նպատակով զանազան տեղերից խնդրվելովով դիմող անձինքներին, որ այլ ևս ուսուցչի կարեւորութիւն չը կայ, որովհետև ուսուցչական խումբը արդէն կադմակերպված է և դասատուութիւնը սկսված է:

ԴԵՐԲԵՆՏԻՑ մեզ գրում են սեպտեմբերի 18-ից հետևեալը: «Այսօր սկսվեցաւ այստեղի ու Մեւրոբեան երկսեռ ուսումնարանի աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը: Կանոնաւոր ուսումը կը սկսվի երբ կը տասնվեն դպրոցում դասադրերը: Ուսուցչական խումբը արդէն կազմված է: Հին հոգաբարձութիւնը դեռ ևս չէ վերջացրել իր հաշիւը նոր հոգաբարձութեան հետ»:

Մեզ գրում են ԴԵՐԲԵՆՏԻՑ և հետևեալը: «Եղանակը շատ ցուրտ է, շարունակ անձրևներ են

գալիս, որ, ի հարկէ, մեծ վնաս է բերում խաղողին, բայց, այնու ամենայն, այդքաղը արդէն սկսվել է և այս տարի գինին շատ առատ է լինելու: Ամենալաւ խաղողը ծախվում է այստեղ ֆունտը 1 կօպէկով: Ինչպէս պատմում են այստեղ այդքաղի ժամանակ հազուադէպ չեն կուտներ և նոյն իսկ վերաւորումներ: Օրինակ այստեղի երկու թուղք ազգականներ, այդքաղի ժամանակ ծանր կերպով վերաւորում են միմեանց, քանի որ զրանցից ամեն մէկը ինքն էր ուղում քաղել այդու խաղողը, զրանցից իւրաքանչիւրը այդ այգին իր սեփականութիւն համարելով: Վերաւորվածներից մէկը արդէն մեռել է, իսկ միւսը միք ի մահ հիւանդ է»:

ՆՈՐ-ՔԱՅԼԱՅԵՏԻՑ հաղորդում են մեզ որ առաջիկայ նոյեմբեր ամսին պէտք է կատարվի այդ քաղաքի դէպ ուսուստի ընտրութիւնը: Երեք տարի է, արդէն, որ այդ պաշտօնը, ինչպէս գրում է մեր թղթակցիցը, վարում է պ. Յ. Մամիկոնեանց: Թղթակցի ասելով հասարակութիւնը մտադիր է կամ վերընտրել նոյն պարոնին, կամ նրա տեղը ընտրել պ. Մատթէոս Արիւկեանցին, որ իր հասարակաց գործերով, ինչպէս վկայում է նամակագիրը, քաջ ծանթ է ամբողջ Նոր-Բայազետին:

Նոր-Բայազետ քաղաքից ոչ հեռու գտնվող ԲԵՐԻՄԲԵՆԻՍ գիւղում հոկտեմբերի 2-ին, ինչպէս մեզ գրում են, մի ոմն Կ. Ա. դնում է սայլով իր հնձած ցորենը բերելու: Մինչև սայլը բառնալով դուժնեքը մտնում են հարեանի դեռ չը հնձած արած և տորոն: Տեսնելով այդ բանը, արտի տէրը յարձակվում է Ա-ի վրա և ձեռքի կաշկռով վերաւորում է նրա ձախ ականջը և ձախ ոտքը ազդրով: Հիւանդի վէրքերը կարում է դաւառական բժիշկ պ. Եւաչիլ և յայտնում է որ շատ վտանգաւոր չեն Յիշված Բերիմբենից գիւղը, թղթակցի ասելով բաղկանում է 19 տուն բնիկ ժողովրդից և 10 տուն դաղթականներից: Հոկտեմբերի 2-ի դէպքում վերաւորողը դաղթական է, իսկ վերաւորվածը բնիկներից է, երկուսն էլ հայ են:

Մեղադրելով «Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը» այն բանի մէջ, որ նա հաղորդում է շատ անգամ սխալ, դիտմամբ փոփոխած, և ուսուցչականութեան շանքին աննպաստ տեղեկութիւններ, Պետերբուրգի «Новое Время» լրագիրը իր այդ նկատողութեանը աւելացնում է և հետևեալը: «Բաղադրական մրցման միջոցին, ինչպէս յայտնի է, դիտմամբ խաբում են հակառակորդին: Բաղադրականութեան տեսակետից այդ բանը քստմեմել է, բայց այդ սրբագործված է, այսպէս ասել, սովորութեամբ և մշտական գործադրութեամբ: Քաղաքացիները վաղուց դարձաւ են իրանց երեսը բարոյականութիւնից, աւելի ձեռնառու համարելով եղբայրական այն սկզբունքը թէ նպատակը սրբում է միջոցները...»:

Մի քանի ժամանակ առաջ հաղորդեցինք մեր ընթերցողներին, որ հարց է բարձրացած ուսաց հոգևոր սեմինարիաների ծրագրի մէջ մտցնելու տարրական բժշկականութեան ուսումը, իբրև անհրաժեշտ գիտելիք գիւղական քահանաների համար: Այժմ, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի ուսուստիները, այդ խնդիրը դրական վախճան չէ ստացել և մերժվել է:

Ստացանք Բոստով (Դոնի վրա) քաղաքում, Յ. Տէր-Աբրահամեանցի հրատարակած «Օրացոյց 1887 թվականի» գրքով: Այդ օրացոյցը ամեն տեղ արծէ 15 կօպէկ: Գրքովի մէջ կայ Ստեփանոս Դադարեանցի պատկերը և նրա կենսագրութիւնը:

ՄԵՐՎԻՑ ուղարկած է մեզ տպելու հետևեալը: «Այս տարի, յունիս ամսին, այստեղ մեռաւ մի երիտասարդ, որի մասին ասում են, որ Ղարաբաղի Լիօր գիւղիցն էր: Հանգուցեալի արծաթեայ ժամացոյցը, և փողը (13 ռ. 50 կ.) մնացել են Աւետիս Սարգսյանեանի մօտ, երկու ուրիշ պարոններին մօտ էլ գտնվում են հանգուցեալի ուրիշ փողերը և իրեղէնները: Հրապարակաւ դիմում ենք հանգուցեալի ծնողներին հրաւիրելով, որ յայտենա իրանց հասցէին, որպէս զի կարելի լինի իրանց հասցնել թէ փողերը և թէ իրեղէնները»:

Հոկտեմբերի 7-ին դատաստանական պալատում

ըննվում էր վրաց, այժմ քաղաքացիական լրագիր «Գրօքայի» խմբագիր իշխան Մաչաբելի գործը: «Գրօքայի» 1885 թվականի յունիսի 3-ից չէ 140 համարում տպված էր մի ֆելիետօն Գ. ուրիշայից վերնագրով: Այդ ֆելիետօնի մէջ նկարագրված են մի խօջայի, մօլլայի և մի պաշտօնեայի,—որ պաշտօն էր ստացել միայն այն պատճառով որ ստացել էր ապտակ—արկածները: Վերջինս անձնաւորութիւնները զգլխով երկար անգործութիւնից, այսինքն կաշառակերութիւնից, ստիպում են Գրօքայ գիւղի չինական ժողովին վճիռ կայացնել, հեռացնելու իրանց համայնքից: 8 անձնաւորութիւնների, որոնք իբրև թէ գողութիւն և աւազակութիւններ անելով են զբաղված: Այդ անում են այն պատճառով որ յետոյ այդ անձինքներից կաշառք առնելով, փոխվի վճիռը, իսկ եթէ նրանք կաշառք չը տան, պէտք ըլլին Բաթում կամ Տփլիսի նահանգը: Բացի դրանից մօլլային, խօջային և աստիճանաւորին սեփականացրած են ուրիշ կեղտոտ արարքներ էլ: Օգուցեթի նախկին դաւաճապետ պ. Վիրուբով, նրա օգնական Քալաթար-չիլիլի և պրիստովի օգնական Իսսեկիանի զանգատով են պալատին որ վերոյիշեալ մօլլայի, խօջայի և պաշտօնեայի կեղծ անուան տակ իրանք են դուրս բերված, այդ բանը արատաւորում է նոցա բարի աշուշը, այդ պատճառով խնդրում են յիշեալ թղթակցութեան հեղինակին և «Գրօքայի» խմբագրին դատաստանել ենթարկել: Պ. Մաչաբելի հրաժարվել էր յայտնել թղթակցի անունը և այդ պատճառով նա միայն էր դատաստանել ենթարկել: Վ. Նախագահի հարցմունքին պ. Մաչաբելի յայտնեց որ ճշմարիտ է մի այդպիսի թղթակցութիւն տպել է, բայց նա աչքի առաջ չէ ունեցել այդ անձանց, քանի որ նա նրանց մինչև անգամ չէ էլ ճանաչում: Պ. Պրօկուրորը աշխատում էր ցոյց տալ որ բացի վերոյիշեալ անձանց ուրիշ մարդիկ չէին կարող լինել թղթակցութեան մէջ յիշված: Գուրբան կաղում է այժման Օգուցեթեան գաւառը, այն արարքները որ իբր թէ գործել են մօլլան և խօջան չէին կարող ուրիշ անձնաւորութիւններ անել, բացի գաւառի գլուխը և նրա մերձակայ օգնականները: Բացի դրանից մօլլային ֆելիետօնում անուն են տուել Բիսոս, որ նուազական է Բիսսարօնի, որ անունը և կրում է պ. Իսսեկիանին: Այդ հիման վրա պ. պրօկուրորի օգնականը գտնում է որ թղթակցութեան մէջ ակնարկված են եղել պ. Վիրուբով և Իսսեկիանի և դրա համեմատ պահանջում է որ պ. Մաչաբելի պատժվի: Մաչաբելի ասելով մեր հասարակութիւնը դժբաղդաբար դեռ զարգացման այն ցածր աստիճանի վրա է կանգնած, որ ամեն մի տպած վէպի կամ ֆելիետօնի մէջ անպատճառ անձնաւորութիւններ է փնտռում: Այսպիսի գործողութիւններ, ինչպիսին երբ յիշված են ֆելիետօնում, ինչպէս երեսը վերջին ժամանակներում եղած ընտրութիւններից, պատահել են. այդ բաները յայտնի են եղել խմբագրութեան: Ստացվում է խմբագրութեան մէջ թղթակցութիւն յայտնման գործողութիւնների մասին. նա չէր կարող կարծել որ այդտեղ ակնարկվում են յայտնի անձնաւորութիւններ, այդ հիման վրա նա խնդրում է պալատից արդարացի իրան: Պալատը հինգ րօպէ առանձնապաշտ յետոյ վճիռ դուրս բերեց, որով իշխան Իվան Մաչաբելի անմիջ է համարվում այդ գործում և այդ պատճառով ազատվում է դատաստանական պատասխանատուութիւնից:

Հոկտեմբերի 6-ին, Թիֆլիսի առաջին բաժանմունքի հաշտարար դատարանում քննվում էր ճարտարագետ պ. Սալամբեգեանի, կապալաու Ռիսասամիձէի և տանտէր Կօվալենկօյի գործը, որոնք մեղադրվում էին այն բանի մէջ, որ ձեռք չեն առել հարկաւոր միջոցները, տան շինութեան ժամանակ, ուստի պատը փող գալով իր տակը թողնել վարդան Յօվհաննիսեանին, որից և նա մեռաւ: Հաշտարար դատարանը մեղաւոր գտնելով այդ բանում առաջին երկուսին՝ վճռեց ենթարկել պ. Սալամբեգեանի երկու ամսւայ բանտարկութեան, իսկ Ռիսասամիձէին երկու շաբաթվայ ձերբակալութեան, մի և նոյն ժամանակ ենթարկելով երկուսին էլ հոգևոր ապաշխարութեան: Կովալենկօ արդարացրած է: Կողմերը յայտնել են իրանց դժգոհութիւնը այդ վճռի համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖԻՆԱՆՍԻՍՏԻՑ

Մօնպէլէի, 30-ին սեպտեմբերի վերջին ժամանակներս Մօնպէլէի հողագործական ազգային ուսումնարանը կողմացողների համար մի մագնիս է դարձել. այժմ այստեղ տասն և երկու հայ և երեք վրացի ուսանողներ կան: Արտասահմանաւոր մի ուսումնարանի համար, որը գիտութեան մէջ ճիւղ է տարածում: սա մեծ թիւ է. սակայն և դա հասկանալի է, որովհետև վերոյիշեալ ուսումնարանը առատ միջոցներ է տալիս հողագործութիւնը ընդարձակ ուսումնասիրելու:

Հայ երիտասարդների նշմարելի և մի և նոյն ժամանակ իրաւացի ձգտումը դէպի Մօնպէլէի առիթ առաւ մեզ իմաց տալ երկրագործութիւն ուսումնասիրել ցանկացող մեր հայրենակիցներին: քանի մի տեղեկութիւններ Մօնպէլէի և առհասարակ Ֆրանսիայի հողագործական ուսումնարաններին վերաբերեալ. յուսով ենք, որ յարգելի «Մշակի» էջերը, որոնց նպատակն է ծառայել ընդհանուր հայութեան բարեկալութեանը, կը բացվեն մեր այս համառօտ նկարագրութեան առաջ:

Վերոյիշեալ ուսումնարանը իր սաների մէջ տարածում է գինեգործութիւն, շերամապահութիւն, մասամբ անասնապահութիւն և բուսաբանութիւն: Գպրաւորացը, իր նպատակին դասաձայն բարեյաշող դիրք ունի. նա ունի բաւականաչափ հողեր, որոնցից եօթ դեքտարին ծածկված են վազելով. սրանց մէջ կը գտնվեն երկրագործի խաղողի գրեթէ ամեն տեսակներից (կան և Հայաստանի ու Վրաստանի տեսակներից—չորս թէ հինգ թուի), մէկ դեքտարին ծածկված է բազմատեսակ պտղաբեր ծառերով, միւսը բանջարեղէններով: Կայ ծխախոտի մի անոս, զբաղաբար ծրախախտի կուլտուրան չէ մշակվում, կայ և մի կտոր հող, որը սահմանված է արհեստական ոռոգում (искусств. орошение) գործնականապէս ուսուցանելու:

Մտնում էք գլխաւոր շինութիւնը. ձեր առաջ բացվում է մի ընդարձակ դահլիճ քարաբարձ զանազան բոյսերով և երկրագործական իրեղէններով: Աշակողման պատի վրա երևում է գիւպսից ձուլած ձիու գլուխ, իսկ ձախակողման պատի վրա եղան գլուխ, իսկ ձախակողման պատված իրանց իրեղէնների մօզէններով, իսկ ձեր դիմաց երևում է սանդուղտ, որը տանում է երկրորդ յարկը, այստեղ գտնվում է փոքր, բայց ոչ աղքատ մուգէյ: Լսարանները, դրաբարանը, ուսուցչական դասարանը, զանազան մասնաւոր դասարաններ, և գիւլբօթիկ ուսանողների ննջարանները գտնվում են ներքին յարկում: Առանձին փոքր շինութեան մէջ գտնվում է ակոս-բատուրը, որտեղ կը տեսնէք էթովերի, ոչխարների, խոզերի և այլ ընտանի կենդանիների յայտնի ցեղերի տեսակներ: Այս շինութեան մօտ գտնվում է հողագործական բազմատեսակ իրեղէնների մթերանոցը: Վերջինիս կից է շերամի որթերի և մեղրաճանձերի համար կառուցած շինութիւնը:

Ուսումնարանը բարձրագոյն է և բաղկացած է երեք լսարաններից: Ուսման ընթացքը շարունակվում է երկու ու կէս տարի, այս ժամանակահատիւը կարելի է լաւ ուսումնասիրել գինեգործութիւնը, շերամապահութիւնը և մասամբ անասնապահութիւնը և բուսաբանութիւնը, միայն, ե-

Պ. տեսուչը քանիցս խնդրած է հայ ուսանողներին, տուն վերադառնալուց մի քանի թփեր ուղարկել Կօլլէկցիայի համար, բայց հայի «հեռանալու ու մոռանալը» զրկել է նրան յոյսից: Ստիպված ենք այստեղ ևս նկատել որ մօտաւորապէս երկու տարի առաջ, մեր հայրենակիցներից մէկը «մոռացած» (?) ուսումնարանի դրաբարանից մի թանկագին (հազուագիտ) գիրք է վերցրել. քանիցս պ. տեսուչը և մեր հայրենակիցները այստեղից դիմած են պարտքին (ինքն իրան կը ճանաչի), բայց վերջինս իր ասելով մինչև ճրջ միջոց չէ ունեցել ուղարկելու այդ գիրքը: Հաստատ ընծայել պատճառին դժուարանում ենք, որովհետև պարոնը Թիֆլիսում է. միով քանի եթէ իրաւ է (?) խնարհաբար կը խնդրենք յանձնել այդ գիրքը «Մշակի» խմբագրատանը. յուսով ենք որ մեծապատիւ խմբագիրը անտես չի առնիլ տեղ հասցնել այդ հարկաւոր գիրքը, որով շատ կը պարտաւորէ Մօնպէլէի հայ ուսանողներին և կը վերականգնէ նրանց (չնորհի պ. Նի նմաններին) խախտված հասարակութիւնը ուսումնարանի կառավարութեան առաջ:

Գ. Կ.

թէ ուսանողը ցոյց տայ իր կողմից աշխատութիւն:

Ուսումնարանը միջին թիւով ունենում է տարբեր կան հարկեր ըստ ուսանողների, որոնք ազատ լըսողներ, երթնելի և գիշերօթիկ կարող են լինել, վերջինները տարեկան վճարում են հազար ֆր. (երեք ամսուանը միասին) և ունեն լաւ սպորտաւոր, բայց ուսումնարանի մի քանի կանոնները խախտել են վերաբերում սոցա: Ամբողջովին կարելի է ասել, որ ուսումնարանի կանոնները մօտ են մեր միջնակարգ դպրոցների կանոններին. միով բանիւ մասնագիտութիւն ուսումնասիրելու համար մեծ յարմարութիւններ կան, կրկնում ենք, եթէ լաւ պարագայ, որովհետեւ գործնական մասին այստեղ մեծ ուղղորդութիւն չեն դարձնում, ուստի կարելի է շքեղ դիպլոմով վերադառնալ հայրենիք առանց գիտութեանց աղբիւրների:

Ուսումնարան կարելի է մտնել մեր միջնակարգ դպրոցների վկայականներով առանց քննութիւնների. հակառակ դէպքում պէտք է քննութիւն տալ, սակայն դա հեշտ է: Հասակը տասն և վեց տարուց պակաս չը պէտք է լինի:

Աւելորդ չենք յամարում հաղորդել, որ Ֆրանսիայում գիւղատնտեսական ուսումնարանների թիւը հասնում է 60-ի: Սրանք չորս կարգի են:

ա) Ferme-Ecole (ագարակ դպրոց)—ստորին կարգի է. այստեղից դուրս են գալիս լաւ գործաւորներ, բաւի լայն հասկացողութեամբ: Այստեղ ուսանողները պիտէ միայն ֆիզիքական աշխատանքով են պարագլած. նրանք գիշերօթիկ են և ոչինչ չեն վճարում ոչ ուսման և ոչ էլ կեանքի համար:

բ) Ecole pratique d'Agriculture (հողագործական գործնական դպրոց)—մի և նոյնն է, ինչ առաջինը, միայն տեսական ուսումը աւելի է զարգացած: Աշակերտները գիշերօթիկ են և կեանքի ուսման համար վճարում են չորս հարիւր ֆր.

գ) Institut Agronomique (հողագործական համալսարան)—մէկն է և զանովում է Փարիզում: Այստեղ գործնական աշխատանքին ուղարկութիւն ընտ չեն դարձնում:

և դ) Ecole nationale d'Agriculture—ինչպէս Մոնպելիէին: Ֆրանսիայում սրա նման երկու ուսումնարաններ են կան. Grignon-ում և Grand-Jouan-ում: Այս երկու ուսումնարաններում աւելի ուղղորդութիւն է դարձրած բուն հողագործութեանը, անտառաբուծութեանը և անասնապահութեանը. իսկ գիւնագործութեան և շերամապահութեան դասեր չը կան:

Առաջիկայ յունիստ ամսում Մոնպելիէից կը աւարտեն չորս հայեր. մէկը մօզդոկեցի է, միւրը բազուկեցի, երրորդը երկսակտալոցի է չորրորդը շուշեցի—հիմնալի դասակարգութիւն:

Վերջացնելով նամակը, կը ցանկանայինք մեր աւարտող հայրենակիցներին յառաջագիտութիւն մտակայ ապագայում: Կը յուսանք, որ պարտնենք անուշադիր չեն թողած յարգելի Վշակի այս տարվայ յիշատակաւոր իրաւանքները: Վերջինից յառաջագիտութիւն մեծ աշխատութեամբ վերաբերվել դէպի այդ յօդուածը, առանկապէս հայրենիք վերադառնալուց:

Գ. Կաֆեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Խօյ, սեպտեմբերի 2-ին

Անցեալները, գործերիս պատճառով, հարկ եղաւ ինձ թողնել թաւրիղը և ուղևորվել դէպի Տաճկա-Հայաստանի կողմերը: Ճանապարհս Գիւնէլի կոչված գաւառի միջովն էր, ուստի ցանկացայ տեսնել և խօյը: Գիւնէլին մի պողտուտ և առատ տեղ է, առողջարար ջրերով: Գիւնէլի մէջ, շատ պարսկական գիւղերում պատահեցաւ տեսնել հայոց շատ գերեզմանատներ, հայերէն գրերով և խաչերով փորագրած տապանաքարերով: Թաւրիղից դուրս գալուց երրորդ օրը հասայ խօյի դաշտը: Կըզը-Հայ կոչված գետի վրա չինաձ կամուրջից անցնելու, դիմացի սարի գագաթի վրա երևում էր մի մատուռ: Պարսիկ ուղեկիցս պատմեց ինձ, որ դա սրբութիւն է հայերի համար և ուխտատեղի: «Այստեղ թաղված է մի քաջ մարդ, որը մեր թագաւորի հետ կռւելիս, սպանվել է» աւելացրեց պարսիկը: Կըզը-Հայի կամուրջի հիմքը շինված է սրբատաշ քարերով, իսկ կամարը երկու աղիւսից: Կամուրջը եօթ աշտանի է, և ունի 210 ոտ երկարութիւն և 12 ոտ լայնութիւն:

Ժողովրդի աւանդութեամբ «Խաթուն» անուանով մի տիկին նորոգել է կամուրջը, ուստի և կոչ:

Վում է «Խաթուն» Գեորգի: Չորրորդ աշտի մի սրբատաշ քարի վրա նշմարվում են հայկական արձանագործութիւններ, որոնցից կարելի եղաւ կարդալ միայն «Մեծ իշխան» բառերը... Ուղեկցիս առաջնորդութեամբ բարձրացայ սարի վրա, յիշեալ մատուռը տեսնելու համար: Մատուռը չինաձ է հասարակ քարից. ունի 32 ոտ երկարութիւն և 28 ոտ լայնութիւն: Տեղական բնակիչները հին աւանդութիւնը այդ մատուռի գոյութիւնը կապում է Վարդան Մամիկոնեանի անձնաւորութեան հետ: Մատուռի մօտից, սարի վրայից կարելի է դիտել խօյի ամբողջ դաշտը, երևում է խօյ քաղաքը իր շրջակայ գիւղերով: Ժողովրդի միջից հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ ռուս-պարսկական պատերազմից առաջ մօտակայ տեղերում կային բազմաթիւ հայ գիւղեր, որոնք ուխտագնացութիւն ունէին դէպի այդ մատուռը, որի նմանների բազմաթիւ աւերակներն են մնացել միայն այժմ... Խաթուն-Գեորգիի մինչև խօյ ճանապարհը շատ ուղիղ է, և ունի մի պարսից աղաջ (7 վերստ) երկարութիւն: Արդէն մոտ էր երբ ես հասայ խօյ: Քաղաքը ունի չորս ջապարհայ, չորս մեծ զանգուր: Պարսիկ բնակիչների թիւը 1,000 է: Պարսիկների և հայերի յարաբերութիւնը այստեղ վատ չէ:

Քաղաքի պարսպաւոր մասին կոչում են Ղաւայ, որի մէջ միայն մի քանի հայ վաճառականներ կան: Քաղաքից դուրս դէպի արևմուտք զբնակութիւն է Մահլայ ասված թաղը, 70 տուն հայ բնակիչներով պարսիկների հետ խառն: Ունեն երկու եկեղեցի, երկու քահանայ և մի ուսումնարան, որից անկեղծից բաղկացած, սուրբ Աստուածածին կոչված եկեղեցու գաւթում, 27 աշակերտներով: Թէ եկեղեցին և թէ՛ ուսումնարանը բաւական յաջողակ կերպով են շինված: Եկեղեցու արևելեան կողմում կայ մի արուեստական անտառ, որից տարին մի քանի թումանի փայտ է ծախվում յօգուտ ուսումնարանի: Ուսումնարանի մէջ սովորեցնում են հայերէն, կրօն և թուրքահայերէն և այլն: Երկրորդ եկեղեցին է սբ. Սարգիս. սա մի մեծ և ահագին եկեղեցի է: Տեղացի պատմում են թէ Գրիգոր Լուսաւորչից 7—8 տարուց յետոյ է շինվել. ոչ մի արձանագրութիւն չունէր, սրբատաշ քարից է շինած. եկեղեցին ունի իր շուրջը մի քանի օրավար իրան սեփական հող: Աւանդութեամբ պատմում են թէ՛ հայ թագաւորներից պարգեւած է սբ. Սարգիս այդ հողը:

Տեղիս հայերը պարագլում են հիւնութեամբ. և մինչև այսօր պահել են իրանց մէջ հին ժամանակի սովորութիւնները: Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ 30,000-ից աւելի խօյ քաղաքից և շրջակայ գիւղերից գաղթել են դէպի Ռուսաստանի ամեն գիւղերը և քաղաքները: Սբ. Սարգիս եկեղեցու մէջ աշակերտեան պատի տակ կայ մի մարմարե շիրիմաքար ռուսաց տառերով փորագրված, որը բերում եմ բառ առ բառ և տառ առ տառ:

Здѣсь погребена жена служившаго 3 Борисовъ-Богословъ драгунскаго полку въхажетромъ Самсона Макаровича Пестрава-Шохомъ заслуги Подполковникъ-женщины-Шохомъ въ 1812 году на Армянскъ Хурма которая приведена была въмилостивизне католлической веры по-крещенно на именована Хори Тинюю изучена была Рое-ескомъ грамоти читать и писать имевшая отъ роду 29 л. передъ дужъ свой богъ въ 1826 году ноября 23 ч. противу вастъ кресения смертнъ ея виновникъ самъ мужъ ея «Самсонъ Яковлеви сынъ Макариковъ».

Խօյ շրջակայները գտնվում են մի քանի հայ գիւղեր, որոնցից միայն Սէրգաւար գիւղը ունի հարկւր տուն բնակիչ, փառաւոր եկեղեցի և մի դառն ուսումնարան: Իսկ միւս գիւղերը Կիզա, Մահլա-դան, Մահլա և Գիրա գիւղերը պարզում են խառն պարսիկների հետ 10—12 տնից բաղկացած. բոլորն էլ ունեն հին քարաշէն եկեղեցիք, և մեծ գերեզմանատներ: Տեղացի ռուսիկ պարսիկներից նեղութիւն են կրում: Ամբողջ խօյի հայ ժողովուրդը գիւղերով հետ միասին 225 տուն են, պարագլում են հողագործութեամբ: Մշակում են ցորեն, գարի, կառաւոր, բամբակ: Կան լաւ լսաղոյ, չամիչ, թուղ, տանձ, նուռ, խնձոր, ուսպ, սիսեռ և կորեկ: Օղը շատ տաք է:

Կ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, 28 սեպտեմբերի

Թէ սրբան դժուար է Պարսկաստանում մի գործ, նոյն իսկ ամենաօգտաւէտ անտեսական գործ ձեռնարկել և գլուխ բերել, կարող է ձեռք ցոյց տալ հետեւեալ օրինակը:

Մի քանի տարի առաջ Ճալալեանց երկու եղբայրները, որոնց մասին արդէն մի անգամ գրվեցաւ «Մշակի» մէջ, հաւաքելով իրանց ամբողջ կարողութիւնը, Թաւրիզից ուղևորվում են Վիէննա, որտեղ շատ նեղութիւններ կրելով, և այնտեղի պարսից դեսպան Նարիման-Պանի հովանաւորութիւնը վայելելով, կարողանում են մի քանի տարվայ ընթացքում եւրօպական կաշուէզօրծողութիւնը կատարեալ կերպով ուսումնասիրել: Վերջապէս ներկայ 1886 թւին իրանց արհեստի մէջ Աստորիայի մայրաքաղաքում հաջգաւորութիւն տալով, ստանում են այդ արհեստի ուսեալ վարպետների իրանց ցանկացած վկայականները: Նոյն միջոցին Նարիման-Պանը առաջարկում է Ճալալեանց եղբայրներին վերադառնալ Պարսկաստան և իր եղբոր, Պարսկաստանի գեղարուեստից նախարար, Ճահանգիր-Պանի հովանաւորութեան տակ հիմնել կաշուէզօրծութեան մի գործարան Պարսկաստանում: Մի և նոյն ժամանակ Նարիման-Պանը խոստանում է պարսիկներին թէ գործարանի սկզբնական ծախսերի համար հարկաւոր դրամական միջոցները Ճահանգիր-Պանը կը հոգայ:

Այդպիսով Ճալալեանց երկու եղբայրները Նարիման-Պանի յատուկ յանձնարարականով վերադառնում են Պարսկաստան, բայց ցաւելով զտառում են Ճահանգիր-Պանին արդէն իր բարձր պաշտօնից հրաժարեցած, ուրեմն գործին թէ նրկթապէս, և թէ բարոյապէս օգնել անկարող:

Ճալալեանց եղբայրները անմիջապէս դիմում են խնդրագրով պարսից Շահին, որ իր ձեռքով խնդրագրի լուսանցքի վրա մակագրութիւն է անում: Նրանցիւ արտաքին գործոց նախարարին որ խնդրատուներին հարկաւորեալ նրկթապէս օգնութիւնը տրվի և նրանք սկսեն տէրութեան համար կաշիներ պատրաստել:

Եւ ասա մինչև այժմ ձեռնարկողների, և արտաքին գործերի մինիստրութեան մէջ անընդհատ զրազրութիւնները և բանակցութիւնները շարունակվում են, բայց դրո՞ք այնու ամենայնիւ ոչինչ որոշ, դրական հետեւեալ չէ հասնում և ոչինչ օգնութիւն մինչև այժմ չէ տրվում երկու հայ ձեռնարկողներին իրանց օգտաւէտ ձեռնարկութեան համար:

Ասա այս դրութեան մէջ են մեր բոլոր անտեսական գործերը: Պարսկաստանում չը կան կազմակերպված մասնաւոր ընկերութիւններ որոնց հետ, ի հարկէ, աւելի հեշտ կը լինէր, և արդենագործների համար աւելի ձեռնտու կը լինէր գործով կապվել քան թէ պարսից տէրութեան հետ, որ ամեն քանի մէջ դանդաղ, անորոշ է և ամեն որոշումը անկերպանի կերպով յետաձգում և ամեն գործ ձգձգում է: Ինքն կառավարութեան բարձրագոյն գլուխը, Շահը ամենալաւ դիտաւորութիւններ էլ ունի, ինչպէս երևում է նոյն իսկ վերոյիշեալ օրինակից, բայց նրա հրամաններ կատարողները անպիտան են և պետութեան իսկական շահերին թշնամի, այլ միայն իրանց անձնական ծառայող:

Այժմ, որքան մենք իմացանք, յիշեալ ձեռնարկողները մնացին յառահատված և անհար: Մեր կարծիքով նրանք մեծ սխալ արած կը լինեն, եթէ, ինչպէս լուր է եղել, ուղեւան դիմել Թէհրանի վաճառականների օգնութեանը, քանզի սրբաւ ևս մի գաղափար անգամ չունեն որ և է մի արհեստի մասին և կատարելապէս գուրկ են որ և է ձեռնարկող, անվախ ոգուց:

Պարսիկների գործի օգտակարութիւնը պարզ լինելով, մեր կարծիքով լաւ կը լինէր որ նրանք մեր խորհուրդը լսէին և դիմէին մի որ և է զրամատրոյ, կամ դրամատէր ընկերութեան Պարսկաստանից դուրս իրանց կաշեգործարանը այնու ամենայնիւ Պարսկաստանի հողի վրա բանալու պայմանով, որովհետեւ նախ ամեն բան այստեղ աւելի էժան է, և երկրորդ ինքն գործը, կաշու արդենագործութիւնը մեծ շահ կարող է խոստանալ Պարսկաստանում: Այստեղ մշակել ձեռքերը, հում կաշին և այլ նրկերը շատ էժան են, իսկ պատրաստած, մշակված կաշին ընդհակառակն թանձ է Պարսկաստանում, քանի որ Եւրօպայից են բերում վաճառականները և մեծ քանակութեամբ էլ այստեղ ծախում: Գրամատէրը, կամ ընկերութիւնը, որ յանձն կառնէր վերն յիշված մասնագէտ ձեռնարկողներին, Ճալալեանց եղբայրներին օգնելու, մեծ վատակ կունենար այդ գործում:—մենք այդ բանում համոզված ենք,—աչքի առջև ունեւով մի կողմից երկրի հում մթերքի և մշակների ձեւերի արժանութիւնը և միւս կողմից հազարիս պահանջ պատրաստած

կաշու մէջ: Այդ տեսակ գործարան Պարսկաստանում կարող կը լինէր մշակված կաշու մի մասը նոյն իսկ Ռուսաստան ուղարկել և մեծ վաստակով ծախել: Եւ այդ տեսակ գործարան հաստատելու համար հարկաւոր կը լինէր ոչ աւել քան 15 հազարից մինչև 20 հազար ռուբլի հիմնական դրամագում:

Մի խորհուրդ ևս կը կամենայի տալ Ճալալեանց եղբայրներին: Փոխանակ պարսից կառավարութեանը խնդրագրով դիմելու, որ անպարզին է մեր կարծիքով, լաւ կանէին պարսիկները եթէ դրամատէրներին դիմելով, նոյն իսկ Պարսկաստանից դուրս, հիմնէին իրանց գործարանը Ռաշտում, որ համ սահման է ռուսաց, համ էլ սահման է պարսից, ուրեմն աւելի յարմարութիւն ունի այդ տեսակ գործի կենտրոն լինելու:

Մենք աւելի էլ կասեմք. թէ և լաւ էր հիմնել գործարանը Պարսկաստանում կամ պարսից սահմանի վրա, քանի որ այստեղ ամեն բան հարեան թուր երկրներից երեք անգամ աւելի էժան է, բայց եթէ այս էլ չափովի և գտնվի մի դրամատէր, կամ ընկերութիւն, որ չի ուզենայ այդ գործարանը հիմնարկված տեսնել Պարսկաստանում,—մեր կարծիքով պ.պ. Ճալալեանցներ աւելի խելացի կը վարվէին, եթէ անցնէին Անգլիոյ կաշեգործարանը, չը նայելով որ թէ կեանքը, թէ մշակների ձեռքերը, թէ ամեն հում նրկերն ու մթերքները ձեւ կողմերում աւելի թանձ են,—քան թէ անդադր սպասելով պարսից կառավարութեան կարգադրութեան, այդ անպարզին յոյսով մնային անգործ Պարսկաստանի մէջ, դուր կորցնելով ժամանակը, ոյժը և Վիէննայում մեծ նեղութիւններով և տուրկ աշխատանքով ձեռք բերած իրանց մասնագիտական հմտութիւնները:

Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սեպտեմբերի 23-ին Փարիզ բերվեցան Անամի թագաւորի զանգեր, որ Փրանսիայիցները վերցրել են, և որը բաղկացած է 192 արկղ արծաթից և 14 արկղ ոսկուց:

—«Моск. Вѣдомости» ռուս լրագրի № 269-ի մէջ տպած է կապիտան Բաղիօ Դմիտրիևի բացատրութիւնը բոլգարական անցքերի վերաբերութեամբ: Դմիտրիևի օգոստոսի 9-ի յեղափոխութեան ղեկավարներից մէկն է, որ գտնվելով Ռուսաստանում, հրապարակաւ յայտնում է, թէ ստու են իր և իր ընկերների (Գորոնիկ, Բենդերովի, Վազովի, Պանովի) մասին տարածված լուրերը, և որ յեղափոխութեան և Բատտենբերգի գահընկեց անելու միակ պատճառը այն էր, որ Բատտենբերգ ուղում էր կտրել Բալգարիայի թուր յարաբերութիւնները Ռուսաստանի հետ:

—Գերմանական լրագրիցները հաղորդում են, որ ստանալով Շուլտայի բերդապահ զօրքի առաջնորդներից այն հեռագիրը, որի բովանդակութիւնը հաղորդեց մեզ «Հիւսիսային գործակալութիւնը» և որը արդէն ծանօթ է ըմբերողներին, բոլգարական պատերազմական միջնորդը, մի խիստ պատասխանով յայտնեց, որ այնպիսի յանգնութեան համար ամենքն էլ կը ձեռնարկվեն: Հեռագիր ուղարկողները շտապեցին ներողութիւն խնդրել, և յայտնել իրանց կատարեալ հպատակութիւնը:

—Ֆաղաքական շրջաններում միտք է ծագել բոլգարական երկրին տալ մի այնպիսի կազմակերպութիւն, որպիսին ունի Եվրոպական (Բ), և մեծ պետութիւնները պէտք է պաշտպանեն Բալգարիայի անկախութիւնը:

—Եւրօպայի զանազան կողմերից եկած հեռագիրները և տեղեկութիւնները վկայում են, որ լօրդ Չերչիլի Վիէննա գալը ամեն տեղ մեծ աղմուկ է յարուցել:

—Լօնդոնից նորերս ուղարկվեցաւ փոստով իրանդիայի Բելֆաստ քաղաքը մի պաշտօնական ծրար, զեներալ Բոլլերի անունով: Այդ ծրարի մէջ ներկայացված էին զանազան գաղափար հանգան, որոնց գործադրութիւնը յանձնվում էր գեներալ Բոլլերին: Չը նայած որ այդ պաշտօնական ծրարին հաղորդին նշանակութիւն էին տալիս, և կարգադրված էր խնամքով տեղ հասցնել ի մեծ զարմանս ամենքի, պաշտօնական ծրարը անհետացաւ... Այդ բանը վերագրում են իրանդիայի ազգաւորներին: Լօնդոնի քաղաքական շրջաններում վարմացել են այդ եղելութեան անբութիւն:

—Սօֆիայից գրում են, որ խնամակալութիւնը

14-24 (4.)